

բաւնգներին, եթէ նոքա զուրկ են բարոյական եւ մասւոր հարստութիւնից. մի խօսքով ձեր ձեռքին է նոցա բարոյական ինանքն ու մահը. ձեզանիւ է կախուած նոցա ապագայ երթան-իութիւնն ու թշուառութիւնը. • Անո-ցէ+ նոցա Տէրոջ խշադրութ

Ա. Վ. Ա. Բ. Ա. Պ. Ա. Ա. Ա. Գ. Ե. Բ.

ՄԱՆԿԱՎՈՐ ԹԱԿԱՆ ՍԿԶԲՈՒ ՆՔ.

(Աբբաս 1881. թ. Դ.)

Կնշղէս ցոյց տուինք անցեալ անգամ՝ Հօգեկան գործողութիւնները սկըս կապուած են բնուխօսականների Հետ այսինքն նոցա գործունէութիւնը կախուած է ջղերի զրութիւնից և ուղեղի կազմութիւնից և զոքա համար՝ նո որ իւր յանձն է առել դաստիարակի պաշտօնը՝ պէտք է մեծ ու շագրութիւն դարձնի մանկան կամ աշակերտի գործարանների վերոյ՝ որոնց իւրաքանչիւրի գործունէութիւնից կախուած է նոցա Հօգեկան գործողութեան որպիսութիւնը. — Գործարանի զիսաւոր գործնէութիւնը կախուած է նիւթերի կանոնաւոր փոխարինութիւնից կանոնաւոր աշխատութեամբ նոցա գործածելուց ողի կանոնաւոր փոխարինութիւնից կերակրից և ըմպելիքից. Արիւաւաւար երակների մէջ աննպարար նիւթերը հոսում մեն լոյն զրութեամբ որմէք զնալով ցրվումն մարմին զանազան մասերում. Նոքա զնալով վերականգնումն ուսկըների մկանունների ջղերի և մորթու կորուսը. Առողջութիւնը ոչինչ չէ նիւթերի անլողչաւ կանոնաւոր փոխարինութիւնը իսկ Հիւանցութիւնը մասնաւոր գործարաններում առաջանում է այդ փոխարինութեան իսկնպարումց. Գոցա բժշկիւ կողմանում է սովորական կանոնաւորութիւնը վերականգնելում:

Այդ մասնաւոր գործարանների զրութիւնից է կախուած մեր Հօգեկան կեանքը. Եւրաքանչիւր Հօգեկան գործողութեան ժամանակ ջղերի մէջ առաջանում է Հիւլեական շարժում—Հօգու Հիւանցութիւնը ևս աշխատումն անզագար. Ջղերի մէջ առաջացած նիւթերի փոխարինութիւնը նման է մկանունների մէջ առաջացածին. Թիգը իւր գործունէութեան ժամանակ գործ է ածում թթուածին և զուրս թողնում ածխամթու. Գորա Համար միտքը աւելի լաւ է աշխատում. երբ նախքան աշխատելը՝ մարդ զանալում է կարճ կամ թէ երկար ժամանակ թարմ օգում. կամ թէ աշխատում է լաւ Հօգմահարած սենեկանմ. Բայց ջղերը չեն կարող անզագար աշխատել առանց իրենց ուժը վերանորոգելու. Հօգեկան ինչպէս և մկանունկան՝ աշխատութիւնը ակարացնում է ջղերը և մարմինը. Գորա Համար Հարկաւոր է ջղերի ինչպէս և մկանունների՝ ուժը վերականգնել և նիւթերի կորուսը լցնել. Թէ մարդը ջղերի գործածելով կամ Հօգեկան գործողութիւնների ժամանակ անզագար նիւթէ կարցնում և կարու է վե-

բականգուման։ սորան կարող են օրինակ լինել այն մարդիկը, որոնք միայն աշխատաւ մեն զիսով և ոչ մկանուններով՝ ուտելու մեծ ախորժակ են ունենում։ Դապարիսն Ա.՝ ինչպէս յայտնի է իւրաքանչիւր սեղան նստելու ժամանակ, լիներ այդ՝ ցորեկ թէ զիշեր ժամանակ։ նա ուտում էր մէկ ումրազ տապակած հաւ։ Այսպէս ուրեմն, միշտ պէտք է վերանորոգել ջղերի կորուստը, այդ վերանորոգումը լինում է, ինչպէս և ամբողջ կազմուածքի, կերակրով, ըմպելիքով և օգով, որ հասնում է ջղերին արիւով, զորա համար զիսի ուղեղը, զինաւոր գործարանը ջղային զրութեան, աւելի արիւն ունի քան մարմին միւս մասերը։ Հետեաբար կերակրի քանակութիւնը և որպիսութիւնը արագ կամ դանդաղ, մարսողութեան զօրեղ կամ թոյլ կատարումը, մաքուր, թարմ կամ փակ և ապականուած ողը, որոնց մէջոցաւ վերանորոգումն ջղերի կորուստը, չեն կարող ազդեցութիւն չունենալ հոգեկան կեանքի արագ կամ թոյլ կատարման։ նորա պայծառութեան, կորովամառութեան, կենդանութեան և եռանդուն գործունեան թիւնը, Ա.ատ. կերակուրը, նորա քանակութեան սակաւութիւնը, դանդաղ և թոյլ մարսողութիւնը և վատ օղը պատշաճաւոր կերպով չեն կատարում վերանորոգումն և լցնում նորա կորուստը։ զորա համար առաջանումէ փիզիքական տկարութիւն, հոգեն կորցնումէ իւր եռանդուն գործունեութիւնը։ Ինչու համար մանուկները հեշտութեամբ են ուսանում մի որ և իցէ բան, ինչու համար նոցա շարժողութիւնը աւելի արագ և աւելի կարճաւուն է քան թէ հասակաւորնե, թիւը՝—որովհետեւ նիւթերի փոխարինութիւնը նոցա մէջ կատարվում աւելի արագ և եռանդազին։ Ինկամը ասումէ, ուշադրութիւնները այն զիտնականների, որոնք նստական կեանք են վարում, զուրկ են կենդանութիւնից և զորա պատճառն է նիւթերի փոխարինութեան պակասութիւնը։ և Կա շտ փորը անընդունակ է ուսանելու, ասումէին հները։ այդ ճշմարիս է այն զէպքիւմ երբ մարդ լաւ և ցյագ ուտելուց յետոյ է սկսում պարապել, բայց մի և նոյն ժամանակ կարելի է հաստատութեամբ ասել քաղցած փորի համար թէ նա անընդունակ է զիւռութիւն սովորելու։

Մեր ասաներից հետեւում, ու եբարդու աշնորհութեանը, առանց հանքառնեան, Բնուել է եբարդու հանքառնեանը շատ վեսսակար կերպով են ներգործում հոգեկան զարգացման վերայ։ Մենք անցեալ անգամ ասուցիւրքնեն, որ ուժգին և չափազանց մտաւոր աշխատաւթիւնը թուլացնումէ հոգեկան կեանքը, պակասացնումէ մոխրագոյն ուղեղը և հասցնումէ մարզուն մինչև ապշութեան։ Ուժից զուրս և անընդհատ աշխատաւթիւնը ջղային զրութեան այնպէս սաստիկ տէարութիւն և ցնցումն են պատճառում։ որ զորանից յետոյ նա չէ առողջանում։ մնամէ կիսարեկ և տկար, ինչպէս մի որ և իցէ մկանուն երբ կատարումէ ուժից զուրս որ և իցէ աշխատանք։ Մանաւանդ չափազանց աշխատաւթիւնից սաստիկ կերպով ցնցումէ մանուկների ջղային զրութիւնը, որովհետեւ նոքա զեւ ևս չեն ամրացած։ Յաճախ պատահումէ, որ ձնողները կամենալով աւելի շուտ և

Հիմաւոր կերպով զարգացնել իրենց որդիներին՝ նոցա կրթութիւնը սկսումն շատ վաղ, և բեռնաւորումն նոցա այնպիսի առարկաներով՝ որոնք նոցա ուժից զուրս են, ի հարկէ յետոյ նոքա տուժումն՝ կորցնելով մանկան առողջութիւնը և բժացնելով նորա հոգեկան ընդունակութիւնները։ Այդպիսի ուղղութեամբ կրթուած մանուկները կորցնումն իրենց աշխայիցը, ճարպկութիւնը, և ստանումն իրենց հասակից զուրս լուրջ կերպարանը, թառամումն հոգեպէս և ֆիզիքապէս, անժամանակ շատերը ևս մահուած գիրկը զնալով, Այն մանուկները որոնք մեծանում են հասակաւորների մէջ, չունենալով իրենց հասակակից ընկերներ, թէ և մտաւորապէս չուտով են զարգանում, բայց մեծաւ մասամբ այդ զարգացումը լինումէ ի վետա նոցա ֆիզիքական առողջութեան։ Ըատ չուտ և լուրջ կրթութիւնը արգելումէ մարդու լցուելուն և երկարանալուն, պակասեցնումէ նորա գեղեցկութիւնը, մարմին ուժը և կարճացնում նորա կեանքը։ Այն առածը թէ՝ Ըատ իմանաս, չուտով կծերանաս, առանցնապէս յարմտը է մանուկներին։ Ըատ ուսեալ փոքրիկ մանուկներ նմանութիւն են բերում ծերուկների։ Ըատ երեկի գիտնականներ շատ շուտ սկսեցին իրենց զարգացումը, բայց չուտով և վերջացրին իրենց կեանքը։ Այդպիսի վաղահանուներից մէկ քանիսը վերջը եղան հոգեռը հիւանդներ, մէկ քանիսը 16—18 տարեկան հասակում սկսան բժանալ և երեցան սակաւ հմուտ քան իրենց սովորական ընկերները։ Երբորդ կարգը՝ ամենից շատը՝ վերջացաւ վաղահաս մահով։ Այս ամեն զօհերը առաջացել են ծնողների և ուսուցիչների տղիտութիւնից։ Ի՞նչպէս կարելի է կառավարել և ուղղութիւն տալ մէկ մեքենայի, երբ չենք իմանում նորա ներքին և արտաքին կազմութիւնը, երբ անձանօթ են մեզ նորան շարժող ուժերը և օրէնքները։ Ծնողները՝ առաւ ելապէս ուսուցիչները մը մէջ՝ պէտք է ծանօթ լինին մանկան հոգեկան և ֆիզիքական կազմութեան հետ, ուրեմն նոքա պէտք է իմանան, բնախօսութիւնն անդամազնուութիւն, առողջապահութիւնն բնագիտութիւն և հոգեբանութիւն, այն հոգեբանութիւնը, որ հիմուած է բնախօսութեան վերայ, և ոչ վերացական հոգեբանութիւնը, որ միայն ծանօթացնումէ նոցա երեսյների և ոչ բուն պատճառների հետ։ Այս ամեն զիտութիւնից ըստ ինքեան զուրս է գալի մանկավարժութեան զիտութիւնը՝ իրեն օգնական առնելով ուսումնարանական փորձառութիւնը, մանկան կեանքի հանգամանքները — նորա առանին և արտաքին կեանքը։ այս վերջինները ուսուցչի պարտականութիւնն է իմանալու։ Մանկան կազմութեան հանգամանքը աշքի առաջ ունենալով ուսուցիչը պէտք է աշխատի՝ որքան կարելի է մանկան շճանրաբեռնել զիտութիւններով, որպէս զի շտկարանայ նորա ջղային զրութիւնը և շրմանայ նորա ուշազրութիւնը։ Նայելով մանկան առողջութեանը և հասակին՝ հարկաւոր է նորան ուսուցանել մանկական երգեր, մարմամարզութիւն, ստիպել նորան շարժողութիւններ անել, վազվել ևլու։ Մանկան՝ մինչև 10 տարեկան հասակը՝ զասարանից զուրս զասեր տալը

բոլորովին վկասակար է, նոյն իսկ դաստիարական գասերը ևս նոյելով պէտք չափաւոր լինին, մինչև 10 տարեկան հասակը նա առաւել պէտք խաղայ քանի կորդոյ, 10ը տարեկանից յետոյ կարելի է դաստիարականց զուր գասեր տալ, այն ևս շատ թեթև գասեր աչքի առաջ ունենալով՝ որ որպէս գաստիարական գասերը բաւականին ծանրաբեռնումն մանկան։

Երբ շափազանց աշխատութեմբ գրգումն զղային դրութիւնը թուրացնում մէ նորա գործունէութիւնը և վկաս է հոսցնում մարզու զարգացման նոյնպէս պէտք ասած և դու է նորա անրաւականաշափ գործունէութիւնը։ Մեր մարմին բոլոր գործարանները որոց թեւում և զղային դրութիւնը՝ զարգանումն և ամրանում մարզողութեամբ կամ կրթութեամբ (սրբայութեամբ) անկրթութիւնը նորա ժուղանումն։ Դորա համար եթէ կամենումենք՝ որ զղային դրութիւնը հոգեկան կեանքի մէջ կատարի իւր մեծ դէրը բաւականին չափով պէտք է կը թենք նորան։ Բաւականաշափ աշխատութիւնըց՝ նորա հետ և լաւ սնունդ ստանալուց՝ մարզու ուղեղի ծաւալը մեծանում, ու զեղի ծաւալի մեծութիւնը հետզհետէ ժառանգական է լինում։ այն ժողովրդոց, որոնք սովորած են մտաւ որ աշխատութեան իրենց մարքի մշակութեան համեմատ մեծանումէ ուղեղի ծաւալը, դորա հետ միասին և գործունէութեան ընդունակութիւնը։ Փարիզում երեք գերեզմանատառ փորելու ժամանակ, որոնք պատկանում են եղել զանազան զարերի, դեկտեմբեր գանգեր և շափելով այդ գանգերի ուղեղի բռնած տեղու գտել են որ՝ այն գանգի ուղեղի տեղն է աւելի մեծ, որն աւելի նորագոյն ժամանակի է. զանշանաւոր է աւելի նորանով, որ ժամանակով մօտ գերեզմանատառ մէջ (1788-1824) թաղուսումն եղել բնակիչների աղքատ և խեղձ դասը, մինչդեռ հին գերեզմանատան մէջ, Կարույրների ժամանակակից քնդհակառակը թաղուած են եղել հին աղնաւական ցհղերը։ Այն մարդիկը որոնք ունին բարձր կրթութիւն, նոցա ուղեղի քանակութիւնը մեծ է. Վայրենու ուղեղը զանազանվումէ քաղաքակրթուած ցեղերի ուղեղի ծաւալից այնպէս, ինչպէս հին աղգերինը նորագոյն աղգերից։ Քաղաքակրթուած մարզու ուղեղը համարեա երեսուն տոկոսով աւելի է վայրենու ուղեղից։ Հատենտոտի կանոնաւոր ուղեղը եթէ գտնուէր մէկ նորոպացու գանցի մէջ՝ այդ նշան կիներ նորա ապուշ լինելուն։ Փոփոխական հանգստութիւնը և գործունէութիւնը, ասումէ բնախօս Միւլերը, ամւրացնումն մէր գործարանները և աւելի ընդունակ են գարձնում իրենց գործունէութիւնը կատարելում։ իսկ այն զղերը և մկանունները, որոնք սակաւ են մասնակցում զղային դրութեան գործունէութեանը, օրինակ ականջի մկանունները՝ կորցնումն իրենց ընդունակութեան այն մասը, որը օգնումէ նորա շարժողութեանը։

Կրթութիւնից ուղեղի ծաւալը մեծանալով, նա աւելի յաջողուկ և ընդունակ գործարան է գառնուում իւր գործունէութիւնը կատարելու ժամանակուն մարզողութեամբ հետզհետէ աւելի արագ և հշտութեամբ է կատարում իւր շարժողութիւնը, աւելի սոկակ զյժ և

ժամանակ դործ գնելով, մի և նոյն է ուղեղը, Հետեարար բնական է, այն անձը, որի ջղային զրութիւնը զիս չէ զարդացել՝ որը լաւ չէ կարուզանում իշխել այդ դործարանի վիրայ, ինչպէս է մանուկը, և եթէ հանդիպումէ նոր և համեմատութեամբ, մէկ դժուար աշխատանք, այն ժամանակ նա այդ աշխատանքը կատարումէ կամ տանումէ շատ դժուարութեամբ, զանգաղութեամբ, շատ անգամ առանց հասկանալու աշխատութեան նպատակը, որից յանաջանուումէ այդ տշխատութեան կամ դործի անյաջողութիւնը, Բայց բաւական ժամանակ անցնելով և նորա ջղերը և մկանունները կրթութեամբ հետզհետէ զարդանալով, նա այդ մի և նոյն աշխատանքը կատարումէ աւելի արագ և ճիշդ, Սորանից բնականարար հետեւ ում, որ՝ դաստիարակիը պէտք է զարդացնի մանկան հետզհետէ, սկսելով պարզ և հեշտ աշխատութիւններից հետզհետէ անցնի բարդերին, և մանուկից չպահանջի այն՝ ինչ որ նա չէ կարող կատարել իւր ջղոյին զրութիւնը չզարդացած լինելու պատճառաւ, Սորանից երեսում՝ որ մասնուկներին չպէտքէ շտապեցնել՝ մանաւանդ երբ նոցա տրուումէ նոր աշխատանք, Ծատապեցնելը մանուկներին այդպիսի զէպքում՝ նոցա բոլորովին ձգումէ խելքից և շփոթեցնում՝ նոցա միտքը, Աբնումին մանուկներ, որոնք զանազանվու մեն իրենց գանցաղ երեակայութեամբ, այս հասկանալի է, իմէկ աչքի առաջ ունենանք՝ որ տպաւորութեան դիտակցութեամբ ներկայացնելու համար ժամանակ է հարկաւոր, թէեւ այդ ժամանակը զանազան է զանազան անձնաւորութեանց համար, Փորձերը ցոյց են տուել որ զիտակցութեամբ տպաւորելու համար հարկաւոր է $\frac{1}{100}$ և $\frac{1}{100}$ վայրկեան, Վաստիարակն աչքի առաջ ունենալով այդ հանգամաներները՝ պէտքէ աշխատի հետացներու այն արգելքները և միջները, որոնք արգելու մեն մանկան կանոնաւոր զարդացման, Պէտքէ աշխատել հետզհետէ հետացնելու բնական արգելքները, Մանաւանդ բնական արգելքների վերայ պէտքէ ուշազրութիւն գարձնեն առանձնապէս ծխական զպրացի ուսուցիչները որովհետեւ ծխական զպրացները մանուկները չունին այն նախապատրաստութիւնը, որը պահանջումէ նորանից ուսումնարանը, ուրեմն նոցա ջղային դրութիւնը չէ սովորած այդպիսի մէկ աշխատանքի, մանաւանդ նորան աւելի են շփոթեցնում իրերի դրութիւնը նոր կեանքի հանգամաները, հասկանալի է ուրեմն թէ ինչո՞ւ համար առաջին անդամ մանուկները թոյլ կերպով են երեակայուում և բժրոնում, և աչա այդ ժամանակ հարկաւոր չէ նոցա ջղային դրութիւնը ծանրաբեռնել դժուար և բարդ խնդիրներով:

Ինչպէս կրթութեան շնորհիւ ցեղէ ցեղ ուղեղի քաշը և ծաւալը մէծանումէ, նոյնին և ջղերի զարդացումը մէկ ցեղից միւսին է անցնուում և օգնում մարդկային յառաջարկմութեան, Այդ աստիճան առ աստիճան զարդացման պատճառն է որ՝ եւրոպացու ուղեղը մեծ է պատճառցու ուղեղից 20—30 խորանարդ մատնաչափով, այդ է պատճառը՝ որ ստորին զարդացումն ունեցող ցեղերը սակաւ կամ բոլորովին ընդունակ չեն երա-

ծշտական արուեստին, մինչդեռ զարգացած ազգերի համար զա բնածին է, այդ է պատճառը՝ որ այն վայրենիներից՝ որոնք լնդունակ չեն նոյն իսկ իրենց մատների վերայ հաշուելու թուերը, որոնց լեզուն հազիւ ունի հարկաւոր դոյականները և բայերը, վերջապէս, դուրս են զալի Ծեկսպիրներ և Նիւտոններ։ Վայրենիների ցեղերի մանուկների վերսյ նկատած են, որսկիզբը նոքա արագ և կենդանի կերպով են զիտութիւնների տարրական մասը սեփականացնում իրենց, բայց սակաւ լնդունակութիւն են ցոյց տալիս ընդարձակ բարձր գիտութիւնների և հետախուզութիւնների մէջ։ Սկըզբում նոքա տուաջ են անցնում մինչև անգամ սովորակներից, բայց յետոյ շատ յետ են մնում։ Մէկ ճանապարհորդ նկատել է որ՝ Նոր Ջելանդայի վայրենիների 10 տարեկան մանուկները աւելի մտացի են քան անդզիացիների նոյն հասակը ունեցող մանուկները, բայց այնու ամենայնիւ շատ քշերը Նոր Ջելանդացիներից կարողանումն հաւասարել անդզիացիներին բարձր ընդունակութիւնների և զիտութիւնների մէջ։ Նոյն զիտուգութիւնը արած են և Սանդուիշեան կղզիների բնակիչների և այլ վայրենի ցեղերի վերաբերմամբ։

Մեր ասածից երկումէ թէ՝ մարդկային ազգի վերին աստիճանի զարգացման կարելիութիւնը կախուած է ու քաջ ցեղէ ցեղը կանոնաւոր կրթութիւնից, որը նորան աւելի լնդունակ է դարձնում տոկալ դժուարակիր մտաւոր աշխատութիւններում և հետախուզութիւններում։

(Յարչեանաբար)

Գէորգ. Ճեմ. Աւագըն Լատրանի սահմանը

ՄԻՍԱՔ Ա.ՍԻԼԵԱՆՑ

Եյս և մի քանի ուրիշ յօդուածներ կարդացած են Վայր Աթոռույս Ա. Գէորգեան Ճեմարանի և Գալլանոցի ուսանողները իւրեանց զրականական ժողովներում, որոնք կարենոր կհամարիմք հրատարակել Երարատի էջերում, խոստանալով հետզետէ կարդացուելիք լնամիր անութիւնների անութիւնների ևս հրատարակել։